

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2021 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ԾՐԱԳԻՐ



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ԱԱՏՄ նպատակ.....	4
ԱԱՏՄ խնդիրներ.....	4
Կառուցվածք.....	5
Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ.....	5
Տարածքային ստորաբաժանումներ՝ տարածքային կենտրոններ.....	5
Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետեր (ՍԲՀԿ).....	6
Քարտեզ 1	
ԱԱՏՄ տարածքային կենտրոնների տեղաբաշխվածությունը Հայաստանի Հանրապետության տարածքում.....	7
Քարտեզ 2	
ԱԱՏՄ սահմանային բժշկասանիտարական կենտրոնների տեղաբաշխվածությունը Հայաստանի Հանրապետության տարածքում.....	8
ԱԱՏՄ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐ.....	9
ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՑՎԱԾՔ.....	11
1. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը.....	11
2. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկեր..	18
2.1. ԱԱՏՄ կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման անհրաժեշտություն.....	18
2.2. Ռիսկի նվազեցմանն ուղղված գործողություններ.....	19
2.3. Ստուգումների գործընթացը.....	20
2.4. Ստուգումների իրականացման ժամանակ կանխատեսվող խնդիրներ.....	20
2.5. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրներ.....	21
Հավելված 1	
Միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված.....	24
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ.....	32
Հավելված 2	
Միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման 2021 թվականի.....	41

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ



ԱԱՏՄ - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին

ԴՇՎՎ - Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն

ԲՕՍՎՎ - Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն

ՀՍՀՎՎ - Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն

ՌԳՍՊՎՎ - Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն

ԻԱՓՎ - Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն

ԻԽՀՏԱԲ - Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

ԱՕՎՎ - Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն

ՏԿ - Տարածքային կենտրոն

ՍԲՀԿ- Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ



ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 444-Ն որոշմամբ՝ ստեղծվել է ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ մասի և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը 2018 թվականի հունիսի 11-ին վերակազմավորվել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, որի կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) հաստատվել է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշմամբ: ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 3-ի թիվ 768-Լ որոշմամբ՝ Կանոնադրության մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշմամբ՝ ԱԱՏՄ համար սահմանվել է 280 հաստիքային միավոր: Կանոնադրական գործառույթների ավելացման արդյունքում՝ ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի թիվ 808-Ա որոշմամբ, ԱԱՏՄ համար սահմանվել է 340 հաստիքային միավոր՝ ավելանալով 60-ով:

ԱԱՏՄ նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

ԱԱՏՄ խնդիրներն են՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ

վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը նշված ոլորտներում:

Կառուցվածք: ԱԱՏՄ-ն կազմված է հիմնական մասնագիտական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից, որոնք տեղաբաշխված են ՀՀ ողջ տարածքում:

Հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ,

այդ թվում՝

• Ոլորտային ստորաբաժանումներ

- 1) Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն,
- 2) Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն,
- 3) Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն,
- 4) Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն:

• Մասնագիտական ստորաբաժանումներ

1. Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն,
2. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն,
3. Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին,
4. Որակի ապահովման վարչություն,
5. Զորահավաքային բաժին:

Տարածքային ստորաբաժանումներ

Տարածքային կենտրոններ

- 1) Երևան քաղաքի տարածքային կենտրոն,
- 2) Հյուսիսային տարածքային կենտրոն,
- 3) Արևմտյան տարածքային կենտրոն,



- 4) Արևելյան տարածքային կենտրոն,
- 5) Հարավային տարածքային կենտրոն:

Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետեր (ՍԲՀԿ)

- 1) «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- 2) Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- 3) Բավրայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- 4) «Շիրակ» օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- 5) Բագրատաշենի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- 6) Այրում-Ջիլիզայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- 7) Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ:


ԱԱՏՄ ղեկավարի 2020 թվականի փետրվարի 20-ի 152-Ա հրամանով հաստատվել է ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունը, և սահմանվել է դրա տարածքային կենտրոնների տեղաբաշխվածությունն՝ ըստ մարզերի:

ԱԱՏՄ տարածքային կենտրոնների և ՍԲՀԿ-ների տեղաբաշխվածությունը՝ ըստ ստորև ներկայացված քարտեզների:



Քարտեզ 1.

ԱԱՏՄ տեղաբաշխվածությունը Հայաստանի Հանրապետության տարածքում




Քարտեզ 2.



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

ԱԱՏՄ սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի տեղաբաշխվածությունը
Հայաստանի Հանրապետության տարածքում



ԱԱՏՄ Ձեռքբերումների ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐ

Տեսչական մարմնի առավել առարկայական ձեռքբերումների շարքում հարկ է առանձնացնել մի շարք կարևոր ձեռքբերումներ: Այդ թվում՝ ԱԱՏՄ-ին ամրացվել են տարածքներ՝ դրա կանոնադրական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու և բյուջեի հետագա բեռը թեթևացնելու նպատակով, մասնավորապես,

- ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների և Երևան քաղաքի տարածքային կենտրոնի աշխատանքները մեկ վայրից առավել համակարգված իրականացնելու նպատակով Երևան քաղաքի Շենգավիթի վարչական շրջանի Արարատյան փողոցի 26 հասցեում ամրացվել է 1617.4 քմ տարածք,

- ԱԱՏՄ Հյուսիսային և Հարավային տարածքային կենտրոնների աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով ամրացվել են Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Սահմանադրության 1 հասցեում 32,60 քմ մակերեսով, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Նժդեհի 14 հասցեում 632,85 քմ մակերեսով և Սյունիքի մարզ, քաղաք Սիսիան, Կամոյի 5 հասցեում 152.95 քմ մակերեսով տարածքներ:

- Հաստատվել են ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը՝ ԱԱՏՄ վերահսկողական գործառույթներն առավել թիրախային իրականացնելու և պլանային ստուգումներ կազմակերպելու, վերահսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը հաշվարկելու, ըստ ռիսկայնության դասակարգելու և ստուգումների տարեկան ծրագիր կազմելու նպատակով:

- Կազմվել է 2020 թվականի ստուգումների ծրագիրն ըստ վերահսկողական չորս բնագավառի՝ ներառելով 191 (134-ը՝ բարձր ռիսկայնության, 57-ը՝ միջին ռիսկայնության) տնտեսավարող սուբյեկտի:

- 2020 թվականի ապրիլի 30-ին հաստատվել են ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը՝ ԱԱՏՄ վերահսկողական (ստուգում) գործառույթներն իրականացնելու



համար: ԱԱՏՄ կողմից շրջանառության մեջ են դրվել և փորձակվել են ԱԱՏՄ վերահսկողության ենթակա ոլորտներին վերաբերող մյուս ստուգաթերթերը:

- Հաստատվել է ԱԱՏՄ 2020 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ առողջապահության, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում անվտանգության և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն առավել արդյունավետ և ըստ ժամկետի կանոնակարգված իրականացնելու նպատակով:

- 2019 թվականի դեկտեմբերին գործարկվել է ԱԱՏՄ պաշտոնական կայքէջը www.hlib.am հասցեով՝ ԱԱՏՄ գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով: Իր լիազորությունների շրջանակում դիմում-բողոքներին արձագանքելու և ընթացք տալու, ԱԱՏՄ կապը հանրության հետ ավելի արագ և արդյունավետ կազմակերպելու նպատակով գործարկվել է նոր թեժ գիծը՝ 8107 հեռախոսահամարով:

- ԱԱՏՄ տրանսպորտային միջոցները, նյութատեխնիկական և գույքային հագեցվածությունը մինչև 2019 թվականի սեպտեմբեր ամիսը եղել է անբավարար: Նշված հարցը կանոնակարգվել է մասամբ.

- 1) Տնտեսված միջոցների հաշվին տրամադրվել է շուրջ 38 մլն դրամ՝ ըստ առաջնահերթության համակարգչային տեխնիկա, գրասենյակային գույք, ինչպես նաև այլ հիմնական միջոցներ ձեռք բերելու համար,
- 2) Ծառայողական և սպասարկման նպատակով ԱԱՏՄ հաշվեկշռին ամրացվել է 19 ավտոմեքենա՝ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, տարածքային կենտրոնների և ՍԲՀԿ-ների աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու համար:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սույն ծրագիրը չի արտացոլում ԱԱՏՄ ընթացիկ գործունեությունը: Այն կազմվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը, Ռիսկի մեթոդաբանությունը, ինչպես նաև ԱԱՏՄ-ում իրականացված վարչական վարույթների վիճակագրությունը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ երեք բաժնից՝

1. **ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների ընդհանուր իրավիճակ,**
2. **ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկեր,**
3. **ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ:**

Երրորդ բաժինը ներառում է հետևյալ երկու հավելվածը.

1. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ,
2. ԱԱՏՄ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ:

1. **ԱԱՏՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ**

ա) ԱԱՏՄ 2017, 2018 և 2019 թվականներին ստուգումներ (թեմատիկ ստուգում) չի իրականացրել՝ ստուգումների տարեկան ծրագրի, ստուգաթերթերի և նշված գործառույթը կանոնակարգող իրավական այլ ակտերի բացակայության պատճառով:

ԱԱՏՄ 2020 թվականի տարեկան ստուգումների ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ռիսկի վրա հիմնված թեմատիկ ստուգում իրականացնելու համար **հրապարակվել է 119 հանձնարարագիր՝** համապատասխան ոլորտները կանոնակարգող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների ապահովման նպատակով, ՀՀ



կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի թիվ 718-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված ստուգաթերթով ստուգում իրականացնելու համար: Այդ թվում.

- **աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում** 27 հանձնարարագիր՝ Որոշման 4-րդ Հավելվածով սահմանված ստուգաթերթով ստուգում իրականացնելու համար,

- **դեղերի շրջանառության ոլորտում** 85 հանձնարարագիր՝ Որոշման 2-րդ Հավելվածով սահմանված ստուգաթերթով ստուգում իրականացնելու համար,

- **բժշկական օգնության և սպասարկման ոլորտում** 7 հանձնարարագիր՝ Որոշման 3-րդ Հավելվածով սահմանված ստուգաթերթով ստուգում իրականացնելու համար:

բ) ԱԱՏՄ գործունեության ընթացքում վերահսկողությունն իրականացվել է դիմում-բողոքների հիման վրա, ինչպես նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ (ներառյալ ՀՀ վարչապետի հանձնարարականները) հարուցված վարչական վարույթների միջոցով:


- ✓ 2017 թվականին ԱԱՏՄ դեռևս գտնվել է ձևավորման փուլում, և վարչական վարույթներ չեն իրականացվել:
- ✓ 2018 թվականին իրականացվել է 208 վարչական վարույթ,
- ✓ 2019 թվականին՝ 1674 վարչական վարույթ, այդ թվում՝ 1407 հունվարից-հոկտեմբեր ամիսների ընթացքում,
- ✓ 2020 թվականի հունվար-հոկտեմբերին՝ 823 վարչական վարույթ:

Դիմում-բողոքների հիման վրա և վարչական մարմնի նախաձեռնությամբ 2020 թվականի հաշվետու ժամանակահատվածում հարուցվել է 823 (ԱԱՏՄ նախաձեռնությամբ՝ 687 + դիմումի հիմքով՝ 136) վարչական վարույթ: Դրանց շրջանակում հայտնաբերված խախտումների վերացման համար տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր

Կարգադրերն ըստ ոլորտների՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

Ոլորտ	Տրվել է կարգադրագիր	Կարճվել է	Կասեցվել է տնտեսավարողի գործունեությունը	Ընդամենը	
				Քանակ	%
Դեղ	16	142		261	31.71
Բուժ	36	68		181	21.99
Հիգիենա	87	72		262	31.83
Աշխատանք (աշխատանքի իրավունք	27	52		119 (70)	14.46
Մշտադիտարկում			2,866	23144	
Ընդամենը	166	334	2,866	23,967 (823+23,144)	

2019 թվականի համեմատ 2020 թվականին հարուցված վարչական վարույթների թվերի պատկերը ըստ ոլորտների հետևյալն է՝



Վարչական վարույթների ընթացքում տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասի մոտ հայտնաբերվել են օրենսդրության պահանջների բազմաթիվ, այդ թվում՝ անվտանգության տեսանկյունից բարձր ռիսկեր ենթադրող խախտումներ, արձանագրվել է օրենսդրության պահանջների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ոչ բավարար մակարդակ վերահսկողության բոլոր ոլորտներում:

2020 թվականին **աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում** հարուցված 119 վարչական վարույթից 70-ը հարուցվել է աշխատանքային իրավունքի խախտման դեպքով:

գ) ՀՀ կորոնավիրուսի (COVID-19) հնարավոր ներթափանցման շրջանում եւ հետագայում երկրում արտակարգ դրության հայտարարման առաջին իսկ օրվանից ԱԱՏԲ ՍԲՀԿ-ներում ապահովվել է ուժեղացված ռեժիմով աշխատանք՝ 24/7 գրաֆիկով հերթապահություն, իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ: Արտակարգ դրության շրջանում՝

- Հսկողություն է իրականացվել տարբեր երկրներից 2,007 չվերթով, 170,909 ավտոտրանսպորտային միջոցով և 1168 գնացքով ժամանած 543,710 ուղևորի և անձնակազմի նկատմամբ՝ իրականացվել է ջերմաչափում, արտաքին զննում, անհրաժեշտության դեպքում՝ հարցում, տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

- Վարակիչ հիվանդություններին բնորոշ ախտանշաններ (ջերմություն, ցանավորում) արձանագրվել է 1999 անձի մոտ, որոնցից 258-ը կորոնավիրուսային վարակի կասկածով հոսպիտալացվել է:


- Կազմակերպվել է 2,761 տարանցիկ ուղևորի, այդ թվում՝ Վրաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանված կարգով դիմավորումը և ուղեկցումը դեպի նախատեսված փոխադրամիջոցներ: Բոլոր օպերատորները, ուղեկցողները և ուղևորներին տեղափոխող վարորդներն ապահովվել են անհատական պաշտպանիչ միջոցներով:

- Համավարակով պայմանավորված՝ լրացվել է ուղևորի բնակավայրի 285,207 հասցեական քարտ, տրվել է մեկուսացման և ինքնամեկուսացման 230,698 ծանուցագիր, հոսպիտալացվել է 258 անձ:

դ) Տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվել են կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ՝ հիմք ընդունելով արձանագրված խախտումները և ռիսկերը:

2019 թվականին իրականացվել է 4245 կանխարգելիչ, այդ թվում՝ 1673 իրազեկման միջոցառում:

2020 թվականին իրականացվել է 36,010 կանխարգելիչ միջոցառում և խորհրդատվություն, այդ թվում՝ 541 իրազեկման աշխատանք տնտեսավարող սուբյեկտների շրջանում և հանրության համար, 23,144 կազմակերպությունում իրականացվել է **մշտադիտարկման աշխատանք** ՀՀ Պարետի 2020 թվականի մայիսի 3-ի թիվ 63 և օգոստոսի 18-ի թիվ 253 որոշումներով սահմանված պահանջների պահպանման ուղղությամբ, 3739 **ստուգայց**՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող» N 3.1.2-001-20 սանիտարական կանոնների և ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամանով հաստատված «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը» սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահանջների պահպանումը պարզելու նպատակով, ինչի արդյունքում կայացվել են վարչական որոշումներ և տրվել են նախազգուշացումներ: Տնտեսավարող սուբյեկտների գործունեության մասով տրվել է 2,866 **կասեցման** որոշում:



ե) ԱԱՏՄ 2020 թվականին թեժ գծով ստացված հարցումների և դիմում-բողոքների վերաբերյալ.


ԱԱՏՄ թեժ գծի 8107, ինչպես նաև քաղաքային հեռախոսահամարներով ստացվել է 2,766 զանգ, իսկ ֆեյսբուքյան պաշտոնական էջով՝ 230 հարց-բողոք, այդ թվում՝ ըստ ոլորտների և նպատակների՝ ըստ ստորև ներկայացված աղյուսակի, որտեղ՝ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն՝ «Դեղ», բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն՝ «Բուժ», հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն՝ «Հիգիենա», աշխատանքի վերահսկողության վարչություն՝ «Աշխատանք», Անվտանգության նորմեր,



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

տեղեկատվություն՝ «Տեղեկատվություն», ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ «Այլ», Պարետի որոշումներ/նորմեր/կասեցում՝ «Պարետ», COVID/սոցալ, առաջարկ:



Հաշվետու ժամանակահատվածում շարունակել են գերակշռել Պարետի որոշումներին, COVID-անվտանգության կանոններին, ստուգայցերին և կասեցման աշխատանքներին առնչվող զանգերը:

Պայմանավորված ԱԱՏՄ նոր լիազորություններով՝ աշխատանքային հարաբերություններին վերաբերող ահազանգերն ու դիմում-բողոքներն աճի միտում են գրանցել:

2. ԱԱՏՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐ

ԱԱՏՄ-ում առկա են մի շարք խնդիրներ և դրանցով պայմանավորված ռիսկեր, որոնք խոչընդոտում են բնականոն աշխատանքին և բացասաբար անդրադառնում ոլորտների վերահսկողության վրա:

2.1. ԱԱՏՄ կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման անհրաժեշտություն

2020 թվականի սկզբում ԱԱՏՄ-ում նախատեսված է եղել 280 հաստիք, որից քաղաքացիական ծառայողների հաստիքները եղել են 107-ը (38,21%), իսկ քաղաքացիական աշխատանք կատարողների հաստիքները՝ 173-ը (61,79%): Նշված հաստիքներից 2019 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ համալրված է եղել 199 հաստիք:

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասը, ձեռնամուխ է եղել քաղաքացիական աշխատանք կատարողների հաստիքները նախատեսել քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում, ինչպես նաև անվանացանկը լրացնել ևս 60 քաղաքացիական ծառայության պաշտոններով՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի թիվ 808-Ա որոշումը:

Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում ԱԱՏՄ-ում նախատեսվել է 340 հաստիք, որից քաղաքացիական ծառայողների հաստիքներն են 264-ը, իսկ քաղաքացիական և տեխնիկական աշխատանք կատարողների հաստիքները 76-ը:

Անհրաժեշտ է համալրել թափուր հաստիքները, բացի այդ՝ գործող աշխատանքային թիմը մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացման և կատարելագործման կարիք ունի:

Նշված հաստիքներից 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ համալրված է 232-ը, այդ թվում՝ 3 վարչական և 5 հայեցողական պաշտոն, քաղաքացիական ծառայող 94,

քաղաքացիական աշխատանք կատարող 106, տեխնիկական սպասարկում իրականացնող 24:

Որոշ ստորաբաժանումներում կամ դրանց առանձին բաժիններում կադրային հագեցվածությունը համալրելու անհրաժեշտություն առկա է:

2.2. Ռիսկի նվազեցմանն ուղղված գործողություններ

2017 թվականին ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի կազմավորման ժամանակ ԱԱՏՄ-ին է փոխանցվել լուծարված տեսչության մնացորդային ոչ պիտանի գույքի մասը, որը մինչ օրս չի ներառվել ԱԱՏՄ հաշվեկշռում:

ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների և Երևան քաղաքի տարածքային կենտրոնի, ինչպես նաև ԱԱՏՄ Հյուսիսային և Հարավային տարածքային կենտրոնների աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու համար ԱԱՏՄ-ին ամրացվել են համապատասխան տարածքներ: Նշված տարածքներում անհրաժեշտ է իրականացնել վերանորոգման աշխատանքներ:

2019 թվականին ՀՀ կառավարության կողմից ԱԱՏՄ հաշվեկշռին ամրացվել և ԱԱՏՄ կողմից ձեռք են բերվել համակարգչային տեխնիկա, գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ:

ԱԱՏՄ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, տարածքային կենտրոնների և ՍԲՀ-ների կողմից վերահսկողական և կանխարգելման աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու համար ծառայողական և սպասարկման նպատակով ԱԱՏՄ հաշվեկշռին ամրացրել է 19 ավտոմեքենա:

ՀՀ կառավարության կողմից կարևորություն է տրվել պետական սահմանի անցման առաջին գոտում իրականացվող կանխարգելիչ միջոցառումների առավել արդյունավետ կազմակերպմանը: Նշվածի համաձայն՝ Մեղրիի և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ՍԲՀ-ներին հատկացվել են տարածքներ՝ զննման սենյակներ

2.4.4. ԱԱՏՄ կողմից (ըստ տնտեսավարող սուբյեկտների և ըստ ոլորտների) համապատասխան բազաների վարման, տեղեկատվության հավաքագրման, ռիսկի հաշվարկման և ստուգումների իրականացման էլեկտրոնային ծրագրի ապահովում:

2.5. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրներ

Արդյունավետ վերահսկողության որոշակի խոչընդոտ են ՀՀ օրենսդրության մի շարք բացեր, ուստի տարընթերցումներից խուսափելու և իրարամերժ արդյունքները բացառելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նշված ոլորտները կանոնակարգող և ՀՀ-ում գործող որոշ իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես.

- **Դեղերի շրջանառության ոլորտում՝** անհրաժեշտ է ներկայացնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, «Դեղերի մասին» ՀՀ օրենքում, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 164-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որով կնվազեցվի դեղերի շրջանառության ոլորտում առկա ռիսկերը:

- **Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝** օրենսդրության կատարելագործման և օրենսդրական բացերի բացառման նպատակով անհրաժեշտ է «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև վերջինիս հիման վրա հաստատված սանիտարական նորմերում (քանի որ պարունակում են բազմաթիվ ոչ արդի պահանջներ):

Առկա են սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի (այսուհետ՝ ՄԲՀԿ) աշխատանքների հետ կապված հետևյալ խնդիրները.

- անկատար է ՄԲՀԿ-ների գործունեությունը կարգավորող նորմատիվ-իրավական դաշտը,

- բացակայում են համաճարակային տեսանկյունից անապահով վայրերից ՀՀ ժամանող ուղևորների վերաբերյալ տեղեկատվության ստացման մեխանիզմները սահմանող ակտեր,

- բացակայում են կամ լիարժեք չեն տարբեր իրավիճակներում ՍԲՀ-ների գործողությունները կանոնակարգող մեթոդական ուղեցույցեր:

• **Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝** բժշկական օգնության և սպասարկման ոլորտում գործող օրենսդրական բացերի նվազեցման նպատակով, նաև հաշվի առնելով հանգամանքը, որ ոլորտը կարգավորող օրենքները և իրավական ակտերը չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին, անհրաժեշտ է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում և օրենքից բխող նորմատիվ իրավական ակտերում (մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների արդյունքում կազմվող բժշկական ձևերը հաստատելու մասին» թիվ 76 հրամանում) կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

• **Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝**

- ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար ոչ ամբողջական պատասխանատվության միջոցների առկայություն,

- շինարարական նորմատիվների բացակայություն,

- մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողների պարտադիր բժշկական զննությունների իրականացման կարգի բացակայություն,

դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ Տեսչական մարմինն ամբողջական տեղեկատվություն փոխանցելու պարտավորություն սահմանող հստակ նորմերի բացակայություն:

3. ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Սույն ծրագրի երկրորդ բաժնում ներկայացված խնդիրները վերացնելու և Տեսչական մարմնի առավել արդյունավետ գործունեությունն ապահովելու համար 2021 թվականին նախատեսվում են իրականացնել վերոշարադրյալ խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված մի շարք, այդ թվում՝ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ:

Նշված միջոցառումները ներկայացված են «Միջոցառումներ՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված» Հավելված 1-ում և «Միջոցառումներ՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման 2021 թվականի» Հավելված 2-ում:

Միջոցառումներ
Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում
խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված

Հ/Հ	Միջոցառում		Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ /ամիս, տարի/
1	2	3	4	5	6
1.	Աշխատողների անանուն բողոքների ստացման employeeprotect համակարգի գործարկում	Մամուլի հաղորդագրություն Տեսանյութ	1) Համակարգի ներդրման նպատակի վերաբերյալ իրազեկում	ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ	01.07.2021
			2) Աշխատողի աշխատանքային իրավունքի պաշտպանության նոր մեխանիզմի վերաբերյալ իրազեկում, որը հնարավորություն կընձեռի բացահայտել ներքին խնդիրները, դժգոհությունները և առաջարկները, որոնք աշխատանքային		

			պրակտիկայում կարող են խոչընդոտ հանդիսանալ		
2.	Աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի գործարկում /ՄԱԿ/	Էլեկտրոնային համակարգի ներդրման օրենսդրական կարգավորումների իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Անձնակազմի ուսուցում Վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում էլեկտրոնային համակարգի կիրառություն	Վերահսկողության գործիքակազմի կատարելագործում և արդյունավետության բարձրացում	ԱՕՎՎ ԻԱՓՎ	30.12.2021
3.	Աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի ներդրմամբ պայմանավորված ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխանող տիպային պայմանագրերի, անհատական իրավական ակտերի տիպային	Վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում էլեկտրոնային համակարգի կիրառություն	1) Աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության ապահովում, 2) վերահսկողության թիրախավորում	ՌԳՍՊՎՎ ԱՕՎՎ	30.12.2021

	օրինակելի ձևաթղթերի կազմում և ներդրում				
4.	1.1. Միջազգային կառույցների հետ համագործակցության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի (IALI) անդամակցության ուղղությամբ գործողությունների իրականացում ԱՊՀ անդամ երկրների և Մոնղոլիայի տարածաշրջանային դաշինքի (PAIT СНГ и Монголии, RALI) տարեկան ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված օրենսդրության կատարելագործման, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների և աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման, ճանապարհային քարտեզի իրագործման աշխատանքներին մասնակցություն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ, ILO) հետ համագործակցության իրականացում օրենսդրության կատարելագործման, ԱՄԿ ստանդարտների կիրառման ապահովման, աշխատանքի վերահսկողության տեսուչների	Աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի պահպանման և ապահովման օրենսդրության կատարելագործում, Աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի ապահովման վիճակի բարելավում, Տեսչական մարմնի գործունեության ապահովում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան	ԱՕՎՎ ԻԱՓՎ	01.01.2021-31.12.2021

		վերապատրաստումների և փորձի փոխանակման բնագավառներում			
	1.2. Համագործակցել այլ երկրների Տեսչական մարմինների հետ իրականացնելով փորձի փոխանակում	Հանդիպումներ, քննարկումներ, սեմինարներ՝ տարբեր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ	Աշխատանքի արդյունավետության բարձրացում	ԱԱՏՄ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ	01.01.2021-31.12.2021
5.	Զրոգտագործման թույլտվություն տրամադրող լիազոր մարմնի հետ համատեղ ջրագծերի, ջրոգտագործողների և ջրոգտագործման նպատակների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում	Օրենսդրական հիմքերի ուսումնասիրություն Լիազոր մարմնի հետ համապատասխան քննարկումների իրականացում	Խմելու ջրի որակի նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացում, վերահսկողության իրականացման դյուրացում, նոր գործիքակազմերի և վարույթների իրականացման նոր մոտեցումների ներդրում	ՀՍՀՎՎ ԻԱՓՎ	30.05.2021 01.07.2021
6.	Լայնաֆորմատ համագործակցություն աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտներում գործունեություն իրականացնող ՀԿ-ների հետ,	Ոլորտներում գործունեություն իրականացնող ՀԿ-ների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում Համագործակցության առաջարկների ներկայացում Ներդրում և իրազեկում	Խնդիրների վերհանում և դրանց լուծման ընդհանուր մոտեցումների ներդրում, Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացում	ԻԽՀՏԱԲ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ	մայիս-հունիս

	վերջիններիս ռեսուրսները խնդիրների վերհանման, հասարակական իրազեկվածության բարձրացման և այլ նպատակներով օգտագործելու համար				
7.	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ գործընկերային հարաբերություններին ուղղված ծրագրերի մշակում, իրականացում	Հնարավոր ուղղությունների քննարկում Երկկողմ համաձայնության առկայության դեպքում համագործակցության ձևաչափի մշակում	ՄԻՊ-ի կողմից արձանագրվող խնդիրներին ԱԱՏՄ-ի կողմից իր իրավասության սահմաններում անհապաղ արձանագրման հնարավորության ստեղծում, խախտումների կանխարգելում:	ԱԱՏՄ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻԱՓՎ	02.08.2021 16.08.2021 20.08.2021
8.	Տեսչական մարմնի աշխատակիցների վերապատրաստում (ըստ ոլորտների) արտերկրում կամ օտարերկրյա կազմակերպությունների կողմից՝ ՀՀ-ում	Վերապատրաստման ոլորտների և թեմաների ընտրություն Վերապատրաստման ենթակա աշխատակիցների ցանկի կազմում	Տեսչական մարմնի կադրային որակի բարձրացում, իրազեկվածություն միջազգային նոր ստանդարտներին և դրանց կիրառում	ԱԱՏՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԻԽՀՏԱԲ	01.01.2021-31.12.2021
